# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՆՎԱԶԵՑՎԵԼ Է

~~21.02.2018 19:18~~

***Հարգելի փաստաբաններ,***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի 20.02.2018թ. թիվ 4/9-Լ որոշմամբ «Փաստաբանի անդամավճարի և հավակնորդի մուտքի վճարի, փաստաբանների վերապատրաստման համար անհրաժեշտ վճարների, ինչպես նաև այլ վճարների չափերը սահմանելու մասին» ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման մեջ կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ ***խորհրդի որոշմամբ նշված Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքում հաշվառված և հիմնական գործունեություն իրականացնող փաստաբանի անդամավճարի չափը սահմանվել է 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատին գրավոր դիմելու պահից:***

Հաշվի առնելով խորհրդի վերոնշյալ որոշումը՝ բոլոր այն փաստաբանները, ովքեր հաշվառված են (մշտապես կամ առավելապես ապրում են) և հիմնական գործունեությունն իրականացնում են որոշման հավելվածով նշված բնակավայրերում, կարող են դիմել ՀՀ փաստաբանների պալատին՝ իրենց ամսական անդամավճարի չափն այսուհետ 2.000 (երկու հազար) ՀՀ դրամ սահմանելու մասին դիմումով:

**Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշումը.**

**** Որոշման վերջին ինկորպորացիան՝ 20.08.2018թ. դրությամբ***

**Բեռնել սահմանամերձ համայնքների ցանկը սահմանող ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/8-Լ որոշման հավելվածը.**

**Բեռնել անդամավճարի ամսական չափը 2.000 ՀՀ դրամ սահմանելու մասին դիմումի ձևաթուղթը.**

## Առաջարկվող նորություններ

**02.04.2016** ԿԻՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

**06.10.2020** ՍԱՀՄԱՆՎԵԼ ԵՆ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՎՃԱՐԵԼՈՒ ԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄ

**17.02.2021** ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ Է ՍԱՀՄԱՆՎԵԼ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿԻՑ ՄԵՐՁԱՎՈՐ ԱԶԳԱԿԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" &&
parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })